

դաւորս Յովհաննէս չարահիւսաւորս... յի- շել յաղաւթս...: Գրեցաւ ՉՀԴ (1325) ի թա- գաւորութեանն Լեւոնի եւ ի կաթողիկոսու- թեան Կոստանդնի, յանապատն Սկեւոյ ի լաւ աւրինակէ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 171. հմմտ. Խաչիկեան, ԺԴ. դարի հայ Ձեռ. Յիշատ., էջ 196):

Լ. Փառք... Ես մեղաւորս եւ չար ծա- ույս բարի արարչին, խարխեալս յաչաց եւ ի մտաց, չարահիւսեցի զգիրս եւ ընծայ նուի- բեմ սուրբ Հրեշտակապետացն որ յերուսա- ղէմ: Աղաչեմ զժառանգողսդ անեղբ իմ մե- ղաց թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք եւ ծնաւորացն իմ եւ որք աշխատեցան ի սա...: Եւ որ ողորմի մեզ եւ ինքն հանդիպի բարի մասին եւ բնակիչք սուրբ տեղուդ առաջինք եւ այժմուս եւ որ այլ զան շնորհիւն Բրիս- տոսի մխիթարչին: Եւ որ սրտիւ լիով առէն Տէր ողորմի եւ ամէն: ՉՀէ (1328): Ի Սկեւ- ույ անապատս (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երուսաղէմ, Թ. 97, ձառնարկ եւ Վկայարանութիւն, գրուած Յովհաննէսէ. հմմտ. Սիւրմէեան, Մայր Յուլ. Երուսա- ղէմի, Ա., էջ 236):

ԼԱ. Փառք... Նա ես մեղաւոր հոգս ովեկս եւ քայքայեալս յամենայն բարեաց գործոց տառապեալ ոգիս, ստուերս քահա- նայից Գրիգոր: Ըղձայցայ այսմ բարի գործոյ եւ մերձեանայ ի գիրս սուրբ, թէպէտ եւ անվարժ էի յարհեստէ գրոյս յաչս եւ յայլ անդամս մի աւր գրելով եւ երկուս կամ աւելի ի վտանգէն կոծեալ տաղնապէի: Սակս այնորիկ խոշոր եւ անհաւասար եւ թէ այսպէս եւ կամ այն ի սուրբ Հոգւոյն շնոր- հաց յանկ հանեալ կատարեցի զսակաւ գիծս Խաղտեար իմով մեղաւոր ձեռաւքս ի վայե- լունն անձին իմոյ եւ յիշատակ ծնաւորաց իմոց եւ զարմից: Եւ առ ոսոս անգեալ աղա- չեմ զամենայն հանդիպողսդ այսմ շնչին գծի մանաւանդ որ ժառանգէք իսկ, սղալանացս որ ի սմա ներեցէք եւ խոշորութեանս մեզ մի զնէք, զի չէ ի կամաց եւ բարի յիշատակի արժանի արարէք: Եւ Աստուած, որ առանն է ի սուրբ բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յի- շելոցս ողորմեացի եւ որ սրտի մտաւք ամէն սակ:

Արդ գրեցաւ սա ի սուրբ ուխտս Սկեւ- ույ ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ կեն- սունակ սուրբ Նշանիս եւ Մաւր Լուսոյն սուրբ Աստուածածնիս: Ի գառն եւ զժնդակ ժամանակիս ի թուականիս Հայոց ՉԳԼ

(1349) ի հայրապետութեան Տեառն Մխի- թարայ եւ ի թագաւորութեան Կոստանդեա: Ո սրտալի եւ դառն ժամանակիս, զի յազդ- մանէ չարին յարուցեալ անաւրինաց ի վերայ քրիստոնէիցս եւ ի սուր սուսերի մաշեցին զազգս մեր ուր եւ ուր մնացեալ յամբոցնիս սակաւ ի հաւատացեղոցս Աստուծոյ:

Եւ ի յայսմ ամի էր աւր Ը. էր Յուլիս ամսոյ ի տակք ամբոցիս սրախոհ արարին երկուս յեղբարց մերոց<sup>8</sup> (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. 1349, Խաղտեար):

ԳԿՏ. Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

### ԱՆՆՈՒԿ ԱՂԱՏՎԵՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԳՆՆԵՆԸ

(Շարունակութիւն):

Մանուկ Ալլահիւրտեան, ըստ Բաճեանի, ապրած է «մօտ ութսուն տարի<sup>58</sup>»: Իր մա- հուան բուականը պիտի ըլլար հետեւարար 1756 + 80 = էրբ 1836: Մինչ ըստ Գալէմ- քեարեանի՝ Մանուկ Ամիրա մեռած է 1820— 1825ին: Ինչպէս Ասկէրեանի քով տեսանք՝ Մըսթըբեան Գերապայծառի մահէն վերջ՝ Մանուկ Ալլահիւրտեանի տունը ազգային ժողով տեղի կ'ունենայ, ուր հարկաւ ինքը ներկայ է: Մըսթըբեան Գերապայծառի մահը տեղի ունեցած է 1824 Սեպտեմբեր 2ին<sup>59</sup>: Իսկ ազգային ժողովը տեղի ունեցած է, ըստ Ասկէրեանի, Մըսթըբեանի մահէն յետոյ՝ «ժամանակէ մը ետքը»<sup>60</sup>: Ասով գրեթէ հա- սած կ'ըլլանք 1825ին, երբ տակաւին ողջ էր Մանուկ Ալլահիւրտեան: Իր մահը տեղի ու- նեցած կրնայ ըլլալ հետեւարար 1825— 1836ին:

Մանուկ Ալլահիւրտեան իր յառուկ գե- րեզմանատեղին եւ դամբարանը ունեցած է Բերայի Հայոց գերեզմանատան մէջ, ուր եւ թաղուած է ինքը եւ հաւանորէն իր Տիկիւնը եւ որդիքը: Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեա- րեան՝ խօսելով Բերայի Հայոց Գերեզմանա- տան վրայ՝ առիթով մը կը շնորհակալ թէ հոն իր յառուկ դամբարանը ունի Ալլահիւրտեան

<sup>8</sup> Սկեւոյի մէջ գրուած Ձեռագիրներու եւ գրէջ- ներու մասին հմմտ. Խաղտեարի գրութիւն մը Ա. Երե- մեանէ, Հասի 1954, էջ 97: <sup>58</sup> Անդ: <sup>59</sup> Հանդէս Ամսօրեայ, 1953, էջ 244: <sup>60</sup> Անդ, էջ 18:

Մանուկ սա՛ նշանագրով. «Կարնեցի Մանուկ Աստուածատուրեան», եւ թէ ան եղած է «Կարնոյիկէ Հայոց գլուխն եւ առաջիննն ան- ցուկն. իր հաւատքին համար երկու անգամ ախտորուած» եւ «իբր 1820—1825ին վախճա- նած եւ այնտեղ (Բերայի գերեզմանատունը) թաղուած» է<sup>61</sup>:

Բ. Մատթէոս Ամիրա Ալլահիւրտեան: Մատթէոս Ամիրայի կեանքէն հետեւեալ գծերը միայն ծանօթ են.

Ծնած է 1764ին Կարնոյ Հինձք գիւղը եւ վաճառականութեամբ զբաղած իր եղբոր՝ Մանուկ Ամիրայի հետ ըլլալով «հարստու- րեամբ եւ անուամբ շատ հռչակեալ Կարնոյ մէջ»: Գործի ընկերն եղած է Կարնեցի Մկրտիչ, որուն մահուան առթիւ կը գրէ Բէօլէեան. «1816 Մարտ 9. Վախճանեցաւ Երզրուցի Մկրտիչ աղան, որ էր նա եկեալ ընտանեօք ի Կարնէ եւ օրքալս Մաթոս ա- ղային. սա 50 ամաց գորով, հիւանդութեան պատահեալ էր յերկար ժամանակաց. Հան- դիսութիւն թաղման սորա եղեւ 4 վարդա- պետօք, 40 տէրտէրօք եւ բազմութիւն ժո- ղովրդովք...»<sup>62</sup>:

Մատթէոս Ալլահիւրտեանի Պոլսոյ գրա- սենեակը նոր եամի մէջն էր<sup>63</sup>, իսկ Թարա- պիա ունէր փառաւոր տուն եւ պարտէզ: Իր գործը սեղանաւորութիւն ըլլալով՝ սեղա- նաւորն եղած էր Եպարքոսին, ունենալով զայն պաշտպան եւ նեցուկ: 1820 Յունուար 5ին (ն. տ.) Եպարքոսը կը փոխուի, որով Մատթէոս կը կորսնցնէր կարեւոր նեցուկ մը թէ՛ իր տան եւ թէ՛ Կաթողիկէ Հայոց հա- մար:

Մատթէոս Ամիրա եղբոր ենթարկուած կրօնական հարածանքներէն մասամբ գերծ- եղած է: Ինքն ալ Երուսաղէմ գացած ըլլա- լով՝ կը կրէր «Մահտեսի» տիտղոսը:

Մատթէոս Ալլահիւրտեանի ամուսնացած էր Տիւղեանց փեսայ Յովսէփ Զամչեանի աղջ- կան հետ, որուն անունը անծանօթ է մեզ: Յովսէփ (ծն. 1765 + 1833) ամուսնացած էր Յովհաննէս Տիւղեանի առջինեկ զաւկին՝ Սրբուհիի<sup>64</sup> (ծն. 1772 Հոկտ. 5 + 1824 Յու- նուար 6) հետ, որոնց սերունդի մասին ոչինչ աւանդած է Մէնէփիշեան:

<sup>61</sup> Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 484: <sup>62</sup> Օրագրութիւն, 1816 Մարտ 9: <sup>63</sup> Պատմութիւն Անգից, 4. Գ. 1818, էջ 11: <sup>64</sup> Հ. Գարբէլ Մ. Վ. Մէնէփիշեան, Ազգաբա- նութիւն Տիւղեանց (տոհմաձառ):

Իր այս ամուսնութենէն աղջիկ մը ու- նեցած է Մատթէոս Ալլահիւրտեանի, որուն ա- նունը նոյնպէս անծանօթ մնացած է, բայց ծանօթ է Մատթէոսի աղջկան փառաւոր հարսանիքը, զոր յիշատակած է ժամանա- կակից Բէօլէեան՝ տալով հետաքրքրական մանրամասնութիւն: Սա կը գրէ. «1814 Հոկտ. 18. Ի Թարապիայ եղեւ հարսանիք Կարնեցի Մաթոս աղայի դստերն ընդ Պէֆ- մէգեան Պոզոսի որդւոյն պարոն Յակոբայ- հարսանիք մեծ եւ բազմութիւն ամիրայից էր անդ. Թնկրեանք, Բլնեանք, Տալաւրեանք, Ազնաւորեանք, եւ ի Հայոց ամիրայից երե-ւելի ստափք եւ ի Յունաց՝ պէյզատէք եւ տօմնայֆ: Նաեւ Պատրիարք Վարդապետն եւ վէֆիլն, եւ սարկաւագօֆ, դպրօֆ յոյժ մեծ հանդիսութիւն եղեւ: Կնեսայրն էր Բլնեան Ամտոնի որդին Գրիգորն, որ 7 նաւակօֆ գնային 3,3 չուխտակօֆ. 3 նաւակն կանանց եւ 4 արանց. Ելլոզ (հրաժարեալ) Յօհաննէս Պատրիարքն եւս էր անդ... սալի (երրորդ) գիշերն այլազգ փեմք եկին եւ ըստ նոցա եղեւ ուրախութիւն: Տիւղեանք եւ Ալիֆա- նեանք առաքեցին զընծայս իւրեանց եւ ոչ գնացին<sup>65</sup>»:

Այս ամուսնութեան առթիւ Մէմ. Այս- պարի յօդուածագիրը կ'աւելցնէ որ Պէֆմէ- գեան Յակոբ՝ Ալլահիւրտեանց փեսայ (տաճ- կերէն՝ տաւատ) ըլլալէ վերջ՝ իր մակա- նունը կը փոխէ Տամատեանի<sup>66</sup>:

Տիւղեաններու եւ Ալիֆանեանց վերա- պահութեան շարժառիթը մեզ անծանօթ է: Չենք գիտեր թէ ինչո՞ւ ասոնք հարսանեաց նուէրներ կը զրկեն, բայց անձամբ չեն եր- նուէրներ կը զրկեն, Տիւղեանց եւ Ալլահ- թար: Որքան գիտենք՝ Տիւղեանց եւ Ալլահ- թարեանց միջեւ ցրտութիւն դոյութիւն չէ ունեցած: Մանաւանդ հոս չի կրնար ցրտու- թեան վրայ իօսք ըլլալ, քանի որ Տիւղեան- ներու բոլոր կատարած պատկի վրայ է խըն- դիրը: Տիւղեաններ եւ Ալլահիւրտեաններ իրարու խնամիացած են յետոյ ալ, ինչպէս պիտի տեսնենք:

Մատթէոս Ալլահիւրտեանի աղջկան այս ամուսնութենէն յառաջ եկած սերունդը ան- ծանօթ է: Տամատեան մականունով ուրիշ հայ կաթողիկէ հին ընտանիք ալ ծանօթ է, որոնցմէ մին Տիւղեաններու խնամիացած է:

<sup>65</sup> Անտոն Բէօլէեան, Օրագրութիւն, 1814, Հոկ- տեմբ. 18: <sup>66</sup> Մէմ. Այսպար, 1906, Թ. 4361:



կատր՝ քառասուն զանգակատունը, երկու զանգակով: Գաւթին յատուկ դռնէն ներս մտնելով աջ կողմը կը տեսնենք փոքրիկ մատուռ մը, որ մկրտութիւններու յատկացուած է եւ ուր կը գտնուի բարձրագիւր դամբան մը, որուն մէջ ամփոփուած է Սէլվեան Գերապայծառին մարմինը: Գաւթիս մէջն է եկեղեցւոյ աւագ դուռը՝ կրկնաթեւ, երկաթաշէն: Կան նաեւ կողմնակի երկու դռներ. աջակողմի դուռը կիներու մուտքին յատուկ է, ուսկից կը բարձրանան վերնատունը: Աւագ դրան ճակատը, մարմարեանի մը վրայ քանդակուած է.

Ահեղ իմն է տեղիս  
Սա է տուն Աստուծոյ  
Եւ այս է դուռն երկնից  
ՌՄԸԹ

Աջ կողմի դրան ճակատը մարմարեանի մը վրայ եւս կայ արձանագրութիւնս.

Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր  
Եւ հաներ զմեզ ի հանգիստ  
Մտից ի տուն քոյ պատարագոք  
Եւ տաց քեզ գալիստ շրթանց  
Զոր բերան իմ խօսեցաւ  
Ի նեղութեան

Իսկ ձախակողմեան դրան վրայ կը կարդանք.

Ահա ընտրեցի գտունս քայս  
Եւ սրբեցի լինել տեղի  
Անունս իմոյ  
Աչք իմ եւ սիրտ աստ եղիցին  
Յամենայն ժամ

Աւագ խորանի կամարակապ ճակատին վրայ կայ մարմարեան մը՝ յիշատակարանովս.

Յիշատակ անմահ  
Տանն Ալլահվերտեան  
1840

Յաջորդ ժամանակներու մէջ բեմին վրայ երկու մարմարեան հաստատուած է մշտնջենաւոր պատարագներու ցանկերով, որոնց մէջ կը կարդանք Պետրոս Պէյ Ալլահվերտեանի, Տիկին Տիրուհի Ալլահվերտեանի

եւ երկու անգամ Մկրթ Պէյ Ալլահվերտեանի անունները<sup>80</sup>:

1901ին զեռնաշարժէն բաւական փութուած ըլլալով եկեղեցին՝ Պոլիս գտնուող Ալլահվերտեանց նիւթական օգնութեամբ կը նորոգուի եւ հաստութեան արօտ մ'ալ կը գնուի<sup>81</sup>:

Ազգային գործիչ

Նազարէթ Ալլահվերտեանի ազգային գործունէութեան մասին կ'ըսուի թէ «մեծ դեր խաղացած է հայ կաթողիկէ հասարակութեան մէջ<sup>82</sup>: Դժբախտաբար այդ մասին բախտ չունեցանք դրաւոր կամ բերանացի տեղեկութիւն մը ձեռք բերելու: Իր գործունէութեան կարեւոր մասը հաւանորէն 1830—1835ի կազմակերպական շրջանին մէջ կ'իյնայ:

Ամուսնութիւն

Նազարէթ Ամիրա ամուսնացած էր Քաթիկո (կատարիներ) հոսիկ(եան)ի Հեա<sup>83</sup>: Բաճեան կը գրէ Տիկնոջ մասին. «Զեմ կըրնար մոռնալ հոս խօսքիս կարգին մէջ յիշու անոր (Նազարէթի) աղքատաւէր Քաթիկո տիկնոջ անունը, որ ի հասարակի մայր աղքատաց կը կոչվէր. այս բարեպաշտ տիկնոն այնքան առատաձեռն գրած ու աղքատաւէր եւ բարեպաշտ էր, որուն նման ու հաւասար շատ քիչ կը գտնվի հիմայ: Աս տիկնոջ զթուրեան պտուղներ ոչ միայն ի Կ. Պոլիս եղեալ աղքատք վայելեր են, այլ եւ ամէն տեղի եւ մանաւանդ այս մեր (Կարին) քաղաքի աղքատք, որոնք հիմայ անոր հոգւոյն համար միշտ պաղատող են առ Աստուած<sup>84</sup>»:

Այս տեղեկէն կ'իմանանք թէ Տիկ. Քաթիկո Նազարէթ Ալլահվերտեան 1853ին վախճանած էր, քանի որ Բաճեան այդ տղերը կը գրէր Կարին՝ 1853ին<sup>85</sup>: Ե՞րբ վախճանած է Տիկ. Քաթիկո: — Իր գաւակը — Մանուկ Պէյ — 1845ին հրատարակած «Պօզոս ու Վերդինիս» գիրքը ձօնած է «Ի Յիշատակ սիրելւոյ մօր իւրոյ Հանգուցելոյ հոստիկեան Քաթիկո Տիկնոջ կողակցի Նազարէթ Ամիրայի Մահուսի Աստուածատուրէն»:

<sup>80</sup> Տե՛ս մանրամասնօրէն՝ Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Ա., Վիեննա 1925, էջ 460—468 նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ լուսանկարը:  
<sup>81</sup> Անդ, էջ 458:  
<sup>82</sup> Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 90:  
<sup>83</sup> Մէնս. Այսպար, անդ, թ. 4361:  
<sup>84</sup> Բազմ., անդ, էջ 403:  
<sup>85</sup> Տե՛ս Բազմ., անդ, էջ 405:

էթ Ամիրայի Մահուսի Աստուածատուրէն»:

Ուրեմն Տիկին Քաթիկո վախճանած էր արդէն 1845ին: Ուր թաղուած ըլլալը անծանօթ է մեզ. չենք գտած տասպանազիրն ալ: Տարակոյս չունինք թէ Բերայի Հին դերեզմանատան մէջ թաղուած ըլլալու է, ուր Մանուկ Ալլահվերտեան իր դամբարանը ունէր, հաւանորէն ընտանեկան:

Մահ եւ քաղուժ

Նազարէթ Ալլահվերտեան կը վախճանի 1835 Նոյ. 12ին (ն. տ.) «դեռ ծերութեան հասակին չհասած<sup>86</sup>», այսինքն՝ 52—53 տարեկան: Թաղումը կատարուած է, կ'ըսուի, մեծ հանդիսաւորութեամբ Բերայի գերեզմանատունը<sup>87</sup>: Իր տասպանազիրը գտած չենք:

Նազարէթ Ամիրայի սերունդը

Նազարէթ եւ Քաթիկո ունեցած են տասը զաւակ: Բաճեան այդ տասնէն միայն հետեւեալներն յիշած է. Անտոն, Յովսէփ, Պետրոս, Թագուհիցա եւ Աննիկ: Սերովբէ Ֆէրհաթեան Նազարէթի զաւակներէն ոչ մէկն յիշած է, բայց կ'ըսէ որ անոր մանչ զաւակները ազջիկ առած են Ազնաւորեան, Գըլնեան, Շէօրեան եւ Եաղըբեան ընտանիքներէն<sup>88</sup>:

Ստուգած ենք որ Նազարէթի զաւակներէն Ազնաւորեանց փեսայացած է Անտոն Պէյ, Գըլնեանց՝ Պետրոս Աղա, Շէօրեանց՝ Յովսէփ Պէյ. իսկ Եաղըբեանց ո՞վ փեսայացած է: Ո՞վ է Նազարէթ Ամիրայի չորրորդ մանչ զաւակը, որ ըստ Սերովբէ Ֆէրհաթեանի Եաղըբեանց փեսան եղած է: — Ստույգ չենք, յիշատակութիւն մը չենք գտած, բայց մեծ հաւանականութեամբ կը կարծենք թէ Նազարէթ Ամիրայի չորրորդ մանչն է Մանուկ Պէյ. այն՝ զոր Բազմավէպի մանչն է Մանուկ Պէյ. այն՝ զոր Բազմավէպի յօդուածագիրը Աբրահամ Ամիրայի որդի եւ յաջորդ կարծած է:

Հ. Բարսեղ Սարգսեան՝ Բաճեանի գրուած մէջ Աբրահամ Ամիրայի անունը յիշած ատեն՝ ծանօթութեան մէջ տեղեկութիւն մը կ'աւելցնէ իր կողմէ, գրելով. «Ասոր թիւն մը կ'աւելցնէ իր կողմէ, գրելով. «Ասոր (Աբրահամ Ամիրայի) որդի եւ յաջորդ եղած

<sup>86</sup> Անդ, էջ 403:  
<sup>87</sup> ՀԱ. 1911, էջ 90:  
<sup>88</sup> Մէնս. Այսպար, անդ:

է հաւանօրէն Մանուկ Պէյ Ալլահվերտեան, զոր հեղինակս (Բաճեան) յիշած չէ հոս: Սա, այսինքն Մանուկ Պէյ, ծնած է ի Կ. Պ. 1824 Յունուար 3. մտած է Մուրատեան վարժարան (ի Պաղովա) 1836 Օգոստ. 4, որպէս առաջին ուսանող եւ ելած է 1838 Նոյ. 12...»<sup>89</sup>:

Արդ, Աբրահամի երէց որդին եւ յաջորդն է Գրիգոր<sup>90</sup>: Աբրահամ ունեցած է Մանուկ (Մանիկ) անունով մանչ զաւակ մը, ծնած 1834ին եւ մեռած 1882ին, 47 տարեկան<sup>91</sup>: Հետեւաբար Սարգսեանի յիշած Մանուկ Պէյ Աբրահամ Ամիրայի զաւակը չէ կրնար ըլլալ: Մենք ամենայն հաւանականութեամբ կը կարծենք թէ Հ. Սարգսեանի յիշած Մանուկ Պէյ Ալլահվերտեանն է Նազարէթ Ամիրայի չորրորդ մանչը եւ որ փեսայացած է Եաղըբեաններուն:

Մեր հաշուով Նազարէթ Ամիրայի զաւակներն են, տարիքի կարգով. 1. Վարդանիս, 2. Անտոն Պէյ, 3. Պետրոս Աղա, 4. Թագուհի, 5. Յովսէփ Պէյ, 6. Աննիկ, 7. Մանուկ Պէյ, 8—10 անծանօթ: Խօսինք կարգաւ:

1. Վարդանիս. — Նազարէթ Ամիրայի տղինեկ զաւակն է Վարդանիս, ծնած 1809ին՝ ամուսնացած է Մկրտիչ Սամաննեանի (ծն. 1806 Դեկտ. 1, † 1861 Նոյ. 5) հետ, որմէ կ'ունենայ մանչ զաւակ մը՝ Գէորգ (ծն. 1832 Յուլ. 9, † 1897 Դեկտ. 11), որմէ Նազարէթ Ամիրային կողմանէ 1853ին. «Նազարէթ Ամիրային կողմանէ տանն պայազատ է հիմայ իւր անդրանիկն Անտոն Պէյ, ծանրաբարոյ, վեհանմունք, հայրենասէր ու կրօնաւէր. այս բարերարն անմոռաց ունի իր սրտին մէջ իւր հայրենեաց յիշատակը, ու իր հարց կառուցած եկեղեցւոյ զարդերը եւ պայծառութիւններ ընել իրեն փառք կը սեպէ<sup>92</sup>»:

<sup>89</sup> Բազմ., անդ, էջ 402, ծանօթ. 1:  
<sup>90</sup> Մէնս. Այսպար, 1906, թ. 4361:  
<sup>91</sup> Թէրնիմանը Էֆեմար Կ. Պ. 1882, թ. 1417:  
<sup>92</sup> Հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 347: — Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեան, Գերեզմանատուն կաթողիկէ Հայք, էջ 123, 266:  
<sup>93</sup> Բազմ., անդ, էջ 403:

Անտոն Պէյ ծնած է 1813ին: Կ'երեւոյ թէ կանոնաւոր մտած պետական պաշտօններու մէջ՝ հետզհետէ բարձրանալով՝ արժանացած է Պէյ տիտղոսին: Կը յիշուի 1855ին<sup>94</sup> եւ մեծագուժար նուիրատուութեամբ (500 ոսկի) կը հանդիսանայ փարթամ Գերդաստանի մը մէկ կարեւոր անդամը<sup>95</sup>: Իր արդիւնալից կեանքը կնքած է 1889ին, 76 տարեկան:

Անտոն Պէյ ամուսնացած է Յովսէփ Ազնաւորեանի դուստր Սոփի Ազնաւորեանի (ծն. 1816, † 1893) հետ: Իրենց պսակը օրհնուած է եօթը դաւակներով, որոնք են. Ազայ Պէյ, Յակոբիկ, Պոզոսիկ, Նազարէք, Աստուածատուր, Ֆուլիկ եւ հաւաճօրէն Հոփսիսիւէ:

1853ին «Նորաբողոք» էին տակաւին Անտոն Պէյի մանչերը, երբ կը գրէր Բաճեան եւ իր գրութիւնը կը ձօնէր անոնց՝ յորդորելով պանոնք որ նմանող ըլլան իրենց նախնեաց: Բաճեանի վերջին տողերն են ասոնք. «Հայրենասիրութեան եռանդն կը վխտայ նաեւ այս մեծանուն գերդաստանին բոլոր սրահն մէջ: Եւս առաւել իւր (Անտոն Պէյի) նորաբողոք որդւոցն Ազայ Պէյին, Յակոբիկ Ազային, Պոզոսիկ Ազային եւ Նազարէք Ազային, որոց նուիրեք եմ այն այս իրենց նախնեաց Ազգաբանօրէիսն եւ նիւղագրութիւնը: Մեծայայտ եմ, որ իրենց նախնեաց դիւցազնութեան ազնիւ արիւն անաղարտ կը պահեն իրենց երակներու մէջ, եւ կը ջանան իրենց ընտիր գերդաստանը միշտ ազնիւ պահել դարէ ի դար բիւրաւոր տարիներու մէջ<sup>96</sup>»:

Շատ քիչ բան ծանօթ է Անտոն Պէյի գաւակներու կեանքի եւ գործի մասին: Ահա մեր գիտցածը. ա. Ազայ Պէյ՝ անծանօթ իր ծննդեան եւ մահուան թուականը՝ 1892ին իր մօր Տիկ. Սոփիի հետ նուիրատուութիւն մը կ'ընէ Ս. Յակոբի Հիւանդանոցին<sup>97</sup>: բ. Աստուածատուր ծնած 1836ին՝ մեռած է 1904ին: գ. Յակոբիկ Պարիսի Մուրատեան փարժարանը մտած է 1855 Յունիս 10ին եւ ուսումը աւարտած 1857 Օգոստ. 17ին<sup>98</sup>:

<sup>94</sup> Մէմ. Հավատիս, 1855, թ. 77: — Հմմտ. Արշ. Արարատեան, 1846, թ. 251:  
<sup>95</sup> Մէմ. Հավատիս, 1862, թ. 456:  
<sup>96</sup> Բազմ., սնդ, էջ 403—404:  
<sup>97</sup> Մէմ. Ախպար, 1892, թ. 2409:  
<sup>98</sup> Բազմ., էջ 403 ծանօթ.:

դ. Պոզոսիկ 1871 Մայիս 23ին կը պսակուի Պետրոս Եաղլըքճեանի դուստր՝ Օր. Տիրուհի Եաղլըքճեանի (ծն. 1845) հետ: Պսակը տեղի կ'ունենայ Բուրուչէճէ (Բոսփոր) Եաղլըքճեանց տունը: Վեց տարիի չափ միասին ապրելէ վերջ՝ երկակողմանի համաձայնութեամբ կը բաժնուին, անկարողութեան պատճառաւ: Երկուքն ալ կ'առանձնանան Ս. Բենեդիկտոսի վանքը՝ Ղալաթիա. մին Փրանսացի Գթութեան Բոյրերուն, միւսը՝ Լազարիստ քահանաներու քով<sup>99</sup>:

Տիկին Տիրուհի Ալլահվերեան յետոյ անցած է Վենետիկ (Hotel Vapore): 1905ին Պոլիս գրելով փափագ կը յայտնէ 50,000 Փրանք նուիրել Հայ Կաթ. Ս. Յակոբ Ազգ. Անկերանոցին իրրեւ Rente viagère (եկամուտ ցկեանս): Այսինքն՝ այն պայմանաւ որ քանի ինքը ողջ է՝ տոկոսը 8% ինքը ստանայ: Վիչէն Գասապեան, որուն գրած էր Տիկինը այս նուիրատուութեան մասին, կը հաղորդէ Անկերանոցի Հոգաբարձութեան: Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ կ'ընդունի Տիկինը նուէրը՝ իր պայմանովը եւ կը խնդրէ Գասապեանէն որ պէտք եղածն ընէ՝ գումարն ստանալու համար: 1905 Դեկտ. 30ին Գասապեան Հոգաբարձութեան կ'իմացնէ թէ Տիկ. Տիրուհի, որ 60ամեայ է, նուիրատուութեան գործողութեան համար իրեն փոխանորդ կը կարգէ Յովսէփ Տամատ: 1906 Յունուար 7ին Կաթողիկոսարանի սրահին մէջ ի ներկայութեան առժամեայ փոխանորդ Արիսապատիւ Սահակ Արքեպ. Հանեանի եւ Մէհմէտի պաշտօնէութեան՝ նուիրատուին փոխանորդ Յովսէփ Տամատ 50,000 Փրանքի փոխանակազրը կը յանձնէ Հոգաբարձութեան Ատենապետ Պետրոս Մահնիւպի եւ Գանձապետ Պոզոս Երպէքճեանի եւ կը հաստատուի Հեօնէքը Երիւով: Հոգաբարձութիւնը այս առթիւ շնորհակալութեան հետեւալ զիբը կ'ուղղէ Տիկ. Տիրուհի Ալլահվերեանի, որ իր նախկին անունով յորջուած է այս գրութեան մէջ.

Ս. Յակոբ Կոստանդինուպոլիս  
Ազգային Անկերանոց 18/31 Յունուար 1906  
Ի Բանկալըի

<sup>99</sup> Հ. Սահակ Վ. Սրտպեան, Ս. Յակոբ Ազգ. Հիւանդանոց, Վիեննա 1915, էջ 330 ծանօթ.:

Շնորհափայլ եւ Գորովագութ Օրիորդ

Նուիրական եւ յոյժ հաճելի պարտք մ'է որ կը կատարենք այսօր, մատուցանելով Ձեզ մեր խորին, անկեղծ եւ սրտարուղի շնորհակալութիւններն Ս. Յակոբայ Ազգային Հաստատութեան ի նպաստ՝ Ձեր ըրած վեհ բարերարութեան համար, եւ միանգամայն թարգման կը հանդիսանանք այն բարեգործական Հաստատութեանս մէջ զսնուող բազմաթիւ պատասպարելոց երախտապարտ զգամմանց:

Կը փութանք միանգամայն ծանուցանել թէ Ձեր օրինաւոր փոխանորդ Մեծ. Տամատ Յովսէփ էֆ. է ընդունեցանք 50,000 Փրանքի գումարը:

Արգարեւ, Շնորհափայլ Օրիորդ, Ձեր ազնուական գերդաստանի ժառանգական ոչ դոյզն բարեմասնութիւններէն մին է այսպիսի բարեգործական զգամմունք, եւ անհամար են այն դժբախտներն, որոնց ցաւերը թեթեւացած եւ սփոփած էք, այս անգամ նոր եւ յայտնի ցոյց մ'եւս տուիք ի հեռուս եւ ինքնաշարժ Ձեր ազնիւ սրտին մարդասիրական բնածին զգամմանց վեհ եւ առատաձեռն նուիրատուութեամբ, որուն յիշատակը, ապահով եղէք, անմոռաց եւ մշտատեւ պիտի մնայ ոչ միայն Հաստատութեանս յիշատակարանաց՝ այլ նաեւ ազգասիր շնորհապարտ սրտին մէջ, եւ որոնք երախտագիտութեամբ կ'օրհնեն եւ պիտի օրհնեն միշտ զՁեզ եւ Ձեր սիրեցեալ ծնողաց յիշատակը:

Խնդրենք, Շնորհափայլ Օրիորդ, հաճեցէք ընդունիլ այս առթիւ մեր սրտարուղի եւ խորին շնորհակալութիւնքն եւ ամենախորին յարգանաց հաւաստիքն

Ատենապետ Պետրոս Մահնիւպ  
Յովս. Մ. Վ. Արեւիկեան Պետրոս Մահնիւպ  
Առ Շնորհափայլ Օրիորդ Տիրուհի Եաղլըքճեան  
Վէնէտիկ, Հոթէլ Վարօրէ<sup>100</sup>:

Պոզոս Ալլահվերեան ողջ էր 1906ին<sup>1</sup>: Պոզոսի եւ Տիրուհիի մահուան թուականը անծանօթ է մեզ: Ե. Հոփսիսիւէ՝ Անտոնի դուստրը եղած կ'երեւոյ անոր համար որ Եիւլիէ գերեզմանատան մէջ Անտոն Պէյի

<sup>100</sup> Անդ. էջ 330—334:  
<sup>1</sup> Մանգուսի Եփեար, 1906, թ. 1519:

Թաղին մէջ կ'իյնայ իր շիրմատեղին եւ տապանադիրը, ինչպէս պիտի տեսնենք քիչ վարը: Հոփսիսիւէ՝ ծնած 1849ին՝ մեռած է 1897ին, որքան կ'երեւայ՝ ամուրի: Գ. Նազարէք՝ ծնած 1851 Յունիս 1ին՝ 1862ին մտած է Ռափայէլեան փարժարան եւ 1868 Օսոստին աւարտած: Իրրեւ պատուոյ անդամ՝ «Դպրոցատիրաց — Արեւելեան Ընկերութեան» 1000 դահեկան նուիրած է<sup>2</sup>: 1892ին ողջ է եւ մօրն ու երեց եղբոր հետ կը մասնակցի Չասկի առթիւ Ս. Յակոբ Անկերանոցի համար եղած հանգանակութեան<sup>3</sup>: Է. Ֆուլիկ († 1906 Յունիս 22 Պատմական Գրքանոց) հետ եւ ունեցած են դաւակներ՝ քանի որ Յակոբի տապանադիրը ունի. «Յակոբ Բըլճեան, Հայր ողբացեալ», ինչպէս պիտի տեսնենք վարը:

Ինչպէս ակնարկեցինք՝ Նազարէք Ամիրայի երեց որդին՝ Անտոն Պէյ Եիւլիէ գերեզմանատան մէջ ունի իր քաղը, ուր սակայն չենք գտներ զոնէ մեծ մասը իր ընտանեաց ամփոփուած: Ասոր պատճառը անշուտ ա յն է որ իր ընտանիքի անդամներէն մեծ մասը արտասահման անցած եւ հոն ալ մեռած ու թաղուած է: Տանք այժմ Անտոն Պէյի թաղին պատկերը:

Թաղ  
Տանն Անտոն Պէյի  
Ալլահվերեան  
Յամի Տեառն  
1894  
—  
Աստ հանգչի  
Անտոն Ալլահվերեան  
ողդի Նազարէքի  
1813—1889  
—  
Աստ հանգչի  
Սօփի Ալլահվերեան  
դուստր Յովս. Ազնաւորեան  
«կին երկիւղած եւ  
բարեպաշտօն օրհնեցի»

<sup>2</sup> Դպրոցատիրաց-Արեւիկեան Ընկերութիւն, Կ.Պ. 1879, էջ 28: — Բազմ., էջ 403 ծանօթ.:

Աստ հանգչի  
Թագուհի Ալլահվերտեան  
դուստր Նագարեթի  
1819—1891  
«Ի քեզ Տէր յուսացայ  
մի ամաչեցից յախտեան».

Աստ հանգչի  
Հոփսիսիմէ Ալլահվերտեան  
1849—1897  
«Վասն անուան համբերի Տէր  
համբեր անձն իմ բանի բուս».

Աստ հանգչի  
Աստուածատուր Ալլահվերտեան  
որդի Անտոնի  
1836—1904  
«Իարձ անձն իմ ի հանգիստ քո  
զի Տէր կոչեաց գեղեցի».

Անտոն Պէյի Ֆուլիկ աղջկալը իր էրկան  
հետ յատուկ շիրիմ ունի Շիրշի մէջ, ուր  
կը կարդացուի.

Աստ հանգչի  
Յակոբ Բըլնեան  
Հայր ողբացեալ  
հանգեալ ի Տէր ի 19 Մայիս 1878.

Տիպիս Ֆուլիկ Յակոբ Բըլնեան  
դուստր Ալլահվերտեան Անտոնի  
Վախճանեալ ի Բարիզ ի 22 Յունիսի 1906.  
(Հ. Յակոբ Բուեան, Գերեզմանատուն,  
անդ, էջ 149):

3. Պետրոս. — Ծնած 1818ին՝ ամուս-  
նացած է Աննա Գըլնեանի հետ: Իրենց զա-  
ւակները կը համարինք հետեւեալները.  
ա. Սրբուհի (ծն. 1843<sup>7</sup>) 1853ին աշակեր-  
տուհի է Միհրան Չէլչիի Տիւրքանի բացած  
հայ կաթողիկէ աղջկանց Ս. Աստուածա-  
ծին վարժարանի<sup>8</sup>: Իր մասին ուրիշ ծանոթ-  
ութիւն չունինք: բ. Պողոս (ծն. 1844  
Դեկտ. 28) 1857ին մտած է Ռաֆայէլեան  
վարժարան և 1861ին աւարտած<sup>9</sup>: 1860  
Հոկտ. 12ին Հ. Մանուէլ Քաջունիի հետ

<sup>7</sup> Հ. Յակոբ Մ. Վ. Բուեան, Գերեզմանատուն,  
անդ, էջ 80—81:  
<sup>8</sup> Մէնմ. Հավատիս, 1853, էջ 209:  
<sup>9</sup> Բագմ., անդ, էջ 403, ծանոթ. 3:

Մայր Վանքս այցելած և այցելուներու  
տեսարին մէջ ստորագրած է: 1866ին պաշ-  
տօնեաց է թուրք Արտաքին Գործոց Նախա-  
րարութեան արտաքին թղթակցութեան  
պաշտօնարանի<sup>7</sup>: դ. Մկրտ Պէյ (ծն. 1846<sup>8</sup>)  
ամուսնացած է Սրբուհի-Հերմանս ի հետ:  
Սրբուհի-Հերմանս աղջկին է Յովհաննէս  
Պիլեգիկիի և կ'ըսուի թէ գրագէտ և բա-  
նաստեղծ եղած է: Մեղի անծանօթ են իր  
գրութիւնները: Արդեօք Քրանսերէն<sup>9</sup> գրած  
է: Մեր հաւաքածոյի մէջ կը գտնուին Մկրտ  
Պէյի և իր Տիկնոջ լուսանկարները: դ. Յա-  
րուբիս (ծն. 1847 Մարտ 17) մտած է Ռա-  
փայէլեան 1857ին և աւարտած 1864 Յունիսի-  
սին<sup>8</sup>: և. Գարբիէլ (ծն. 1847<sup>9</sup>) Վիեննա  
վանք եկած է իրրեւ կղերացու 1865 Սեպտ.  
5ին և ելած՝ 1865 Հոկտ. 24ին: Արձանա-  
գրուած է սակայն թէ որո՞նք են իր ծնողքը՝  
է՞րբ ծնած է, և այլն: Հաւանական կը հա-  
մարինք թէ Պետրոսի զաւակն ըլլայ: դ. Նա-  
գարեթ (ծն. <sup>9</sup>) 1868 Հոկտ. 27ին մտած է  
Մուրատեան վարժարան և ելած 1870  
Սեպտ. 7ին<sup>9</sup>:

Պետրոս Ալլահվերտի մեռած է 1870  
Փետր. 26ին<sup>10</sup>: Իր որդիքը Ղալաթիոյ Ս.  
Փրկիչ եկեղեցւոյ պատին մէջ գետեղած են  
մարմարեան քար մը՝ հետեւեալ Յիշատակա-  
գրով.

Յալլահվերտեանց բագմեալստ գարմէ  
Պետրոսի որդւոյ Նագարեթի,  
Վաստակարեկ հորն երախտագէտ որդիք  
Արտասուարք աջօք ի յիշատակ անմոռաց  
Իւրոյ անձին և բնութանցն հաւորէն  
Յորմն տաճարիս գլխմս գայս եղին  
անբարբառ  
Որք միանգամ ակն արկանիցէք ի սա,  
Հայցեսչիք ի Փրկչէն գեանգիստ յախտեմիք  
Վասն հոգւոց ևնցա  
Հանգեալ ի 26 Փետրուարի 1870  
Ամաց Յիսուս և երկուց<sup>11</sup>.

Տիկին Աննայի մասին ոչ մէկ ծանօթու-  
թեան հանդիպած ենք:

<sup>7</sup> Արամեան Օրացոյց, 1866:  
<sup>8</sup> Բագմ., անդ:  
<sup>9</sup> Անդ:  
<sup>10</sup> Օրագիր, Կ. Պ. 1870 Փետր. 27, Յաւելուած  
Օրագիր Լրագրոյ:  
<sup>11</sup> Հ. Յակոբ Բուեան, Գերեզմանատուն, անդ,  
էջ 264:

4. Թագուհի. — Ծնած է 1819ին և  
մեռած 1891ին՝ մնալով կոյս: Իր վաղամե-  
ակի վարդուհի քրոջ մէկ տարեկան դաւելին  
— Գէորգ — մայրադորով խնամք ունեցած  
է: Գէորգ Պէյ Սամանճեան Թագուհիի մա-  
հուան առթիւ ձօնած է սգերդ յուշերդ մը,  
որմէ քանի մը տող ահա.

...Թըռեալ արդարն... ազատ յերկնից  
անդր ի դրախտ ծաղկեբանդ  
Թողեալ ի բաց սուտ աշխարհիս թշուառու-  
թեան ըզվանդակ.  
Ի մեղեդիս հոգեկորոզ ընդ զըւարթնոց սուրբ  
պարուն,  
Մշտազըւարծ, երգել անանց, անմահ տիոց  
ըզգարուն.  
...Ի միամեայ մանկիկ տիոցս, որք մայրա-  
կան գգուանաց,  
Ձանուս սիրոյ Որդիական, ետու՛ր ինձ ձօն  
անմոռաց.  
...Ըստ սուրբ Գրոց, իրրեւ զուշան այն  
աճեցեալ Դու վայրի,  
Ձեռք մահացուին, երբե՛ք ի քոյդ ձգտեալ ի  
ցօղ նազելի,  
Ճշգրիտ պատկեր Դու՝ կուսական անրիժ  
վարուց մաքրութեան,  
Ի նոյն քաղես, ո՛ր Թագուհիդ, սրբակենցաղ  
յայնմ Անուան...  
Գէորգ Սամանճեան<sup>12</sup>

5. Յովսէփ Պէյ. — Ծնած 1820ին՝  
ամուսնացած է Սոփի Շէօրիեանի հետ: Ան-  
ծանօթ է մեկ թէ զաւակ ունեցած են: Տի-  
կին Սոփի մանկամարդ տարիքի մէջ վախ-  
ճանած է 1856 Յունուարին<sup>13</sup>: Յովսէփ Պէյ  
1868—1870 իրրեւ Երեսօրեան մասնակցած  
է հայ կաթողիկէ ժողովքներու<sup>14</sup>: 1881ին  
Մըլըրը Անտոն Պէյին հետ Ազարեան կա-  
թողիկոսին ընկերանալով Սուլթանին ներ-  
կայացած և այդ առթիւ ստացած է Մէնի-  
սիէ պատուանշանին երկրորդ կարգը<sup>15</sup>:  
Յովսէփ Պէյ կը մեռնի 1882 Ապրիլ 27ին  
և կը թաղուի Ֆէրիկուլի գերեզմանա-  
տունը: Օրուան թերթը կը գրէ այդ առթիւ.  
«Հանգուցեալը իր կեանքի ընթացքին շատ  
բարեկործութիւն ու ձեռնաուղծութիւն ըրած

<sup>12</sup> Հանդէս Անօրեայ, 1891, էջ 347:  
<sup>13</sup> Մէնմ. Հավատիս, 1856, թ. 121:  
<sup>14</sup> Ժամանակ, 1868, էջ 6: — Սէտաթը Հագրգէթ,  
Կ. Պ. 1870, թ. 7:  
<sup>15</sup> Մասիս, 1881, թ. 2942:

է: Կարօտին ու աղքատին ողորմութիւնը  
անպակաս ըրած է: Այսօր իրաւամբ խոր  
ցաւ կը պատճառէ իր մահը և իր կորուստը  
կը սգան ոչ միայն իր մերձաւորներն ու ազ-  
գականները, այլ և հանրութիւնն ու մաս-  
նաւորապէս չքաւորները<sup>16</sup>:

6. Աննիկ. — Ծնած է իրր 1821ին և  
մնացած կոյս: 1862 Հոկտ. 27ին Վիեննա  
գրած է. «Աննա Աստուածատրեան»: 1867ին  
գրած է. «Աննա Աստուածատրեան»: 1867ին  
Պարիս անցած էր՝ Պոլիս դառնալու մտքով,  
սակայն մահը վրայ կը հասնի «Վաղարշա-  
շամ յամաց տիս»: Իր մահը սգացած է Պետ-  
րոս եղբորը տղան՝ Պողոս, գրելով հետե-  
ւեալ վերնագրի տակ.

Երգ Դամբանական  
Ի սղալի մահ հօրաքեռ իմոյ  
Աննա Տ. Ալլահվերտեան  
Վախճանեալ ի Փարիզ  
Տաղ

...Սարսեցաւ տուն Աստուածատրեան և  
համայն խինդք հեշտագին.  
Փռիւնցան փոյթ ի ժամ և և յօդ և ի բար-  
բառս տըխրագին.  
Մինչ Անձկալոյն դժագրեցաւ ազիտորմ մի-  
շատակ,  
Ըսքողեցան յինչն քաղցունք և Ըրճուական  
ճառագայթք...  
Այլ մինչ զողջոյն յետին տուաք անդ ի պա-  
հուն սիրայնոյ,  
Թըւէր մեզ թէ անդրէն ողջամբ գարձցի  
Աննիկ ի Գաղղիոյ...  
Նընջեաց ի քուն յախտեմից, վաղարշաշամ  
յամաց տիս,  
Գեղ վայելուչ պերճահասակ նազէր վըստահ  
ի հովտիս...

Ի լուսասիրիւն երկնի ցօլոյ յանմահական  
լուսարփիս  
Առաքինի զանուանն համբաւ թողեալ յերկրի  
և՛ ի սըրտիս.  
Ահա պըսակ քեզ պատրաստեալ ծաղկանց ի  
հիւս անթառամ.  
Կեցցէ՛ անուան Աննիկ ի յուշ. սլացի՛ր թեօք  
բագմերամ:

Պողոս Պ. Ալլահվերտի<sup>17</sup>

<sup>16</sup> Թէրթ. Էփեմար, 1882, թ. 1410:  
<sup>17</sup> Մէնմ. Հավատիս, 1867, թ. 715:

7. Մանուկ Պէյ. — Ինչպէս վերը բացատրեցինք՝ Մանուկ Պէյ, մեր կարծիքով, Նազարէթ Ամիրայի չորրորդ մանչ տղան է: Ծնած է 1824 Յունուար 3ին: 1836 Օգոստոս 4ին մտած է Պաղտայի մէջ նոր բացուած Մուրատեան վարժարանը՝ իրրեւ առաջին աշակերտ եւ ելած է 1838 Նոյ. 12ին: Կը պատմուի թէ դպրոցին մէջ — իրրեւ գիտակից իր սոհմի ազնուականութեան — խընդրած է Վարժարանի տեսուչ Հ. Պետրոս Մինասեանէն որ չիօսի դպրոցի իր ընկերներուն հետ: Հ. Պետրոս՝ գուշակելով ըլլալէքը՝ կը պատասխանէ. «Շատ աղէկ, որդիս, մի՛ խօսիր: Սակայն պատանին Մանուկ մէկ կողմէ մեծ ձանձրոյթ գգալով, միւս կողմէ ընկերներուն դուարթ խաղերը տեսնելով՝ ինքնիրմէ կ'երթայ կը խառնուի ընկերներուն, կը խօսի ու կը խաղայ»<sup>18</sup>:

Մանուկ Պէյն է մեր կարծիքով Եղաբլուրեաններու փեսայացոյցը<sup>19</sup>, սակայն բոլորովին անձանօթ մնացած է իր կնոջ անունը, ինչպէս անձանօթ է Մանուկ Պէյի եւ կնոջ մահուան թուականը եւ իրենց սերունդ ունենալու կամ չունենալու պարագան:

Մանուկ Պէյ ունի փոքրիկ գրական աշխատութիւն մը. թարգմանած է Bernardin de Saint-Pierreի (1737—1814) Paul et Virginie սիրուն բարոյալից վէպը եւ 1845ին հրատարակած է Վենետիկ սա խորագրով. «Պօղոս ու Վիրջինիա, թարգմանեաց ի դազդիականէ Մանուկ Պէյ Մահտեսի Աստուածատուրեան, աշակերտ Մուրատեան վարժարանի, Վենետիկ Սուրբ-Ղազար 1845»: Գրքին երկրորդ էջին վրայ կայ ձօնս. «Ի Յիշատակ Սիրելոյ Մօր իւրոյ Հանգուցելոյ Խոտիկեան Քարինֆօ Տիկնոջ, Կողակցի Նազարէթ Ամիրայի Մահտեսի Աստուածատուրեան»:

Մանուկ Պէյ իր Յառաջարանին մէջ կը գրէ. «...Աս սիրուն ու ախուր պատմութիւնն՝ արքնցնելով իմ սրտիս մէջ այ ինն յիշատակներ, թարգմանելու փափաք եկաւ ինձի: Հիմա կ'ընծայեմ Ազգիս իմ գրաւոր աշխատութեանս աս նուաստ երախայրիքը, ո՛չ այնչափ մտանազրին արժանի թարգմանութիւն մը սեպելով զաս, որչափ իրրեւ գրգիռ մը ինձի հասակակից երիտասարդաց»:

<sup>18</sup> Բազմ. անդ, էջ 402, ծանօթ. 1:  
<sup>19</sup> Տե՛ս Մէլիս. Ախպար, 1906, թ. 4361:

Մանուկ Պէյի այս գիրքը շատ սիրուած ու կարգացուած է ժամանակին: 1859ին հաւանօրէն սպառած ըլլալով՝ երկրորդ տպագրութիւն մը կը տեսնէ՝ զարգարուելով այս անգամ բնագրական չորս պատկերներով: Հաւանական է որ Մանուկ Պէյ ողջ ըլլալով՝ ինքը թելագրած ըլլայ պատկերներու յաւելուածը:

1894ին երրորդ տպագրութիւն մ'աւ կ'ունենայ գրքոյիս՝ առանց ուրիշ որեւէ յաւելուածի կամ փոփոխութեան: Մանուկ Պէյ ո՞ղջ էր այս առին:

8—10. — Նազարէթ Ամիրայի վերջին երեք զաւակներու անուններն անձանօթ են: Բաճեան կը գրէ ասոնց մասին. «...զանց կ'առնեմ հոս նաեւ անոր (Նազարէթի) աղնուաշուք վաղամեռիկ որդիք ու զստերք՝ որոնց ոմանք իրմէ ետքը քողին այս անցաւոր կեանքը»<sup>20</sup>: Հետեւաբար ոմանք ալ իրմէ առաջ մեռած են: Նազարէթ Ամիրա մեռած է 1835ին:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՁԵԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

(Շարունակութիւն):

21. ՊԵՐՊԵՐԵԱՆ ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879) Կազմուած է 1879 Յունիս 1ին: Ընկերութիւնը 5 ոսկի զրկելով Դպրոցասիրաց Արեւելեան Ընկերութեան՝ նամակի մը մէջ կու տայ հարկ եղած բացատրութիւնը Ընկերութեան մասին: Ահա այդ նամակը.

Տէր, 1879 Յունիս 1ին վարժարանիս (Պէրպերեան) աշակերտներն մի Ընկերութիւն կազմեցին, նպատակ ունենալով Հայաստանի մէջ ուսումն տարածելու պաշտօն ստանձնող Ընկերութեանց օգնել: Այն Ընդհ. Ժողովոյ մէջ, որ գումարեցաւ Հոկտ. 14ին, Գործ. Ժողովս առաջարկեց, իր սկզբնաւորութիւն մի իւր նպատակի գործադրութեան 5 ոսկեոյ գումար մի յղել ձեր ազգաչէն Ընկերութեան եւ այս առաջարկն բոլոր Ժողովոյն կողմէն միաձայնութեամբ ընդունուեցաւ: Ներեցէք սակայն Եթէ կը համարձա-

<sup>20</sup> Բազմ., անդ, էջ 403:

կիմք այսքան փոքր գումար մի իրր նպատակիւ ձեզ. գիտէք թէ Ընկերութեան մի առաջին քայլերն, ինչպէս մի մանկան, խիստ տկար են. ժամ մի յառաջ մեր կարօտ Հայրենաց օգնելոյ փոյքն մղեց զմեզ այս որոշման...:

Դիւան Գործ. Ժողովոյ Պէրպերեան Սանուց Ընկերութեան.

Ատենադպիր	Ատենապետ
Վահան Յ. Մամասեան	Յովհ. Թ. Արամեան <sup>68</sup>

Ընկերութիւնը 1880ին 5 ոսկի կը յանձնէ Խասկիւղի Կիլիկեան Ընկերութեան՝ ինչպէս Չէյթունի Կիլիկեան վարժարանին<sup>69</sup>: 1881ին ալ 5 ոսկի կը զրկէ Դպրոցասէր Հայրենաց Ընկերութեան<sup>70</sup>:

Կը կարծենք թէ Ընկերութիւնս պահած է իր դոյութիւնը մինչեւ 1895, թէեւ 1881էն սողին չունինք որ եւ է նշմար իր մասին:

Արլոյ յաճեանի ցանկին մէջ չենք գտներ Ընկերութիւնս:

1908էն վերջը կազմուած «Պէրպերեան Սանուց»ը շարունակութիւնը չէ այս Ընկերութեան:

21ա. ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879) Հիմնուած է 1879 Նոյ. 4ին (Լրագիր, Կ. Պ. 1879, թ. 1118): Ուրիշ տեղեկութիւն չունինք:

22. ԱՂԲԱՏԱՆԵԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1880) Սերամիէ, ինչպէս տեսանք նախապէս, ունեցած է իր «Աղբատասիրաց Ընկերութիւն»ը, որ երկար տարիներ տեսած չէ: Սակայն թաղին մէջ հինէն ի վեր երկար տան դոյութիւն ունեցած է «Տնանկ աղբատաց Հոգաբարձութիւն» մը, որ կանոնաւոր «Տնար» մ'աւ ունեցած է, ինչպէս գեղեցիկ կերպով ցուցուցած է Հմայեակ Բաճ. էքսէրեան<sup>71</sup>:

Սերամիէ թաղին մէջ 1879էն սկսած պէտք տեսնուած է յատուկ կազմակերպու-

<sup>68</sup> Թէրք. Լեփեար, 1879, թ. 706:  
<sup>69</sup> Մասիս, 1880, թ. 2563:  
<sup>70</sup> Անդ, 1881, թ. 2805:  
<sup>71</sup> Տե՛ս Յիշատակարան, անդ:

թեան մը՝ թաղին աղբատ եւ հիւանդ անդամները խնամելու համար<sup>72</sup>: Ընկերութիւն մը հիմնելու գաղափարը կը յղանայ Համբիկ Ռուբէնեան կամ Մանուկեան: 1880 Յունիս 19ին կը հիմնուի Ընկերութիւնը: Ս. Սաչ վարժարանին մէջ հաւաքուած 70 աղքատավարժարանին մէջ հաւաքուած 70 աղքատավարժարան Ընդհ. Ժողով գումարելով՝ կ'ընտէր անձեր Ընդհ. Ժողով գումարելով՝ կ'ընտէր արեն Մայր Դիւան եւ Տնօրէն Խորհուրդ «Աղբատասիրաց Ընկերութեան», որուն գեղակերտ գանձանակը կը շինէ Պապաճեան Շիշմանեան<sup>73</sup>:

Ընկերութիւնը կը հիմնուի նախ միայն Սերամիէ թաղին համար. յետոյ երբ հետգհեաէ Սիւրտարի միւս թաղերէն ալ անդամներ կը դուրին եւ Ընկերութիւնը միւս թաղերուն աղքատներն ալ կը խնամէ<sup>74</sup>: 1883ին գումարուած Ընդհ. Ժողովը Ընկերութեան Կանոնադիրը կազմած առին՝ անոր ճակատը կը գրէ. «Նպատակն է Սիւրտարի երկրից քաղից հիւանդ աղքատները ճիշտաբար կարմանել»<sup>75</sup>, որմէ յայտնի կ'ըլլայ թէ 1883էն սկսած Ընկերութիւնը կը վերածուի «Երկրից քաղից Աղբատասիրաց Ընկերութեան» մը:

Կանոնադիրը կը բաղկանայ 30 Յօդարածէ, սովորական բաղանդակութեամբ: Աղբատասիրացն է՝ շարաթական 20 փարս:

Ընկերութեան Ընդհ. Ժողովներուն նախադասած են Մատթէոս Եպս. Իզմիրլեան, Մկրտիչ Արքեպ. Երիւնեան եւ Գրիգորիս Եպս. Ալեքսանեան, իսկ վարչական անդամներու անունները, յաջորդական տարիներու մէջ, կը դանէ հետաքրքրուողը էքսէրեանի վերջիչեալ գործին մէջ (էջ 48—169):

Ընկերութեան հիմնադիրներն են. Տօքթ. Պետրոս Բէլիզեան, Համբիկ Ռուբէնեան, Անթուան Ռոզոյաթթօ, Միհրան Գարամաճեան, Գարրիէլ Արարաճեան, Գէորդ Սաչատուրեան, Վաղինակ Փափազեան<sup>76</sup>:

<sup>72</sup> Անդ, էջ 44—46:  
<sup>73</sup> Անդ, էջ 46:  
<sup>74</sup> Հմայ. Թէրք. Լեփեար, 1882, թ. 1338:  
<sup>75</sup> Յիշատակարան, անդ, էջ 47:  
<sup>76</sup> Անդ, էջ 155: